



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

25 հուլիսի 2022 թվականի թիվ 104-Ա

ք. Երևան

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության 2022 թվականի հուլիսի 15-ի տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը՝ «Մինեման» և «Տունտունիկ» ծրագրերի մասով, պայմանագրի գործողության ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

2022թ. հուլիսի 25

ք. Երևան